

Պարսկական ժողովրդական հեքիաթներ, թարգմանությունը և մշակումը *Գևորգ Ասատրյանի*, Երևան, «Էդիտ պրինտ» հրատ., 2010, 464 էջ:

Գիրքը հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը: Ժողովածուի առաջաբանում (էջ 5–16), որի հեղինակն է գրքի խմբագիր Գառնիկ Ասատրյանը, գիտականորեն լուսաբանվում են հեքիաթների ընտրության սկզբունքը, պարսկական և հայկական հեքիաթների որոշ ընդհանրություններն ու առանձնահատկությունները, թարգմանության հետ կապված մի շարք բարդություններն ու դրանց լուծման ելակետերը՝ կապված լեզվառական, բառապաշարային խնդիրների հետ: Գրքում ընդգրկված է 88 հեքիաթ՝ ժանրի ամենատարբեր դրսևորումներով՝ կենդանական, հրաշապատում, իրապատում, կուտակային (կումուլյատիվ): Գիրքը, կազմից սկսած, պարունակում է գեղեցիկ, արևելյան բներանգով նկարագրումներ, որոնց հեղինակն է Վահան Թոփչյանը: Հարուստ և բազմերանգ նկարները՝ յուրաքանչյուր հեքիաթի դեպքում դիպաշարին համապատասխան կերպարներ և իրավիճակներ պատկերող, գրքի ընթերցանությունը հաճելի են դարձնում թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար՝ վերջիններիս դեպքում մասնավորապես իրանական մշակույթի որոշ առանձնահատկությունների պատկերային ընկալման հնարավորություն ստեղծելով: Գրքի վերջում գետեղված է բառարան (էջ 443–457), ուր իրենց մատչելի բացատրությունն են գտնում բարբառային, հազվադեպ օգտագործվող և օտար բառերը, ինչպես նաև հեքիաթներում տեղ գտած իրանական տեղանունների ու անձնանունների հանգամանալից բացատրություններ են տրվում:

Այս գրքով առաջին անգամ պարսկական հեքիաթները հայերեն թարգմանությամբ և բավական ընդգրկուն պուժետային կազմով ներկայանում են հայ ընթերցողին: Ինչպես տեղեկանում ենք ժողովածուի առաջաբանից, հեքիաթներն ընտրված են տպագիր աղբյուրներից և Իրանի տարբեր վայրերից գրառված դաշտային նյութերից: Ընտրված պատումները տիպական են իրենց տեսակի մեջ, ունեն պուժետային հստակ հենք, ամբողջական են ու կառուցիկ:

Ժողովածուին թուուցիկ ծանոթանալու դեպքում նույնիսկ անմիջապես աչքի է ընկնում թարգմանության գեղեցիկ լեզուն և հե-

քիաթին վայել ուժի առկայությունը: Ինչպես իրավացիորեն նկատում է առաջաբանի հեղինակը, հեքիաթ թարգմանելու համար բավարար չեն միայն լեզվի տիրապետումը, գրողի փորձը, բառի նուրբ զգացողությունը, համապատասխան բանասիրական ձիրքը և գեղարվեստական ճաշակը. պետք է նաև ունենալ «բանագետի հոտառություն, բարբառային բառաթերքի, ժողովրդական լեզվի, բառ ու բանի ու ավանդությունների իմացություն և, անշուշտ, ազգագրական լուրջ գիտելիքներ» (էջ 12), մանավանդ, երբ խոսքը վերաբերում է արևելյան հեքիաթին: Ժողովրդագիտական գիտելիքները, ժողովրդական բառ ու բանի զգացողությունը, նաև հայ դասականների, հատկապես հեքիաթի՝ թումանյանական հիանալի թարգմանությունների և մշակումների փորձի յուրացումը ստեղծել են արևելյան հեքիաթների հայալեզու իսկապես հաջողված նմուշներ: Գևորգ Ասատրյանը կարողացել է ըստ հարկի և ճաշակով օգտվել ժողովրդական բառաթերքի անսահման կարուստ հնարավորություններից՝ այդպիսով պահպանելով հեքիաթի ամենակարևոր առանձնահատկությունը՝ ժողովրդականությունը: Այնպիսի բառեր և բառակապակցություններ, ինչպիսիք են, օրինակ, հունար, դուշ, գալում, սուփրա, դուքան, թամաշա, հալբաթ, ամանաթ, մուրազ, խալիս, դոնադ, դալլաթ, մեյդան, հալալ, աչք կպցնել, շվի ածել, պառավ նան, օխտը պորտ, թեք ընկնել, հավ ու ճիվ, ճարը կտրած, ձեռաց փախցնել, հարամգադա, ձեռքաշել, հախից գալ և բազմաթիվ այլք, թարգմանության լեզուն մոտեցնում են բարբառային-խոսակցականին, իսկ հեքիաթում բազմիցս հանդիպող ասոթային ժանրերի՝ առած-ասացվածքների, անեծք-օրհնանքների՝ հայերեն համարժեքների դիպուկ օգտագործումը հայ ընթերցողի լեզվամտածողությանը հարագատ ու հասկանալի բնագիր է ստեղծում [այսպես, օրինակ, հետևյալ առած-ասացվածքները՝ հալած յուղի տեղ ընդունել (20), իւլքը հացի հետ ուտել (էջ 20), փորձը փորձանք չէ (էջ 23), աչքերն սպասելուց ջուր էին կտրել (էջ 24), առյուծի սիրտ էր կերել (էջ 355), անեծքները՝ այ քրքրվես դու, լավ օր չտեսնես, բախտիդ չհասնես (էջ 320), հողեմ գլուխդ (էջ 419), փաղաքշական դիմելածները՝ ոտքիդ տակի հողը լինեմ (էջ 146),

քեզ մատաղ (էջ 234), հայկական հեքիաթին բնորոշ ավանդական արտահայտությունները՝ աշխարհով մեկ եղան (էջ 244), էնքան սիրուն, որ լուսնին ասում է՝ ա դու դուրս մի արի, ես եմ դուրս եկել (էջ 274) և այլն: Բարբառային բառերի ընտրության սկզբունքի մասին ևս հստակ նշվում է ժողովածուի առաջաբանում. ընդունելի են համարվել այն բառերը, որոնք նախադեպ ունեն գրականության մեջ՝ հայ դասականների երկերում, և այդպիսով ձեռք են բերել «Բարբառային-խոսակցական» արժեք: Միևնույն ժամանակ անընդունելի են համարվել ժարգոնային բառերն ու արտահայտությունները, ինչպես նաև «է» օժանդակ բայի խոսակցական «ա» սխալ կիրառությունը (էջ 15):

Բարբառային և ժողովրդախոսակցական բառերին ու արտահայտություններին զուգահեռ հեքիաթների բնագրերում բազմիցս հանդիպում են զուտ պարսկական, տեղական անվանումներ՝ հոգևոր սպասավորների, կրոնական հասկացությունների ու կատույցների, դրամի, չափի ու կշռի միավորների, որոնք էլ իրենց հերթին ապահովում են հեքիաթների ազգային բներանգը՝ չկտրելով դրանք իրենց մշակութային արմատներից [օրինակ՝ նամագ, ազան (աղոթքի հրավեր), մոլլա, ախունդ (մահմեդական հոգևորական), շեյխ, փաշիզ, դագ, դրան (մանրադրամների անվանումներ), դինար (ոսկեդրամ), թուման, աշրաֆի (պարսկական հին ոսկեդրամ), սիր, խարվար (կշռի միավորներ), ջարիբ (մակերեսի չափման միավոր) և այլն]:

Բառապաշարի և լեզվամիջոցների այսպիսի դիպուկ կիրառությունները միահյուսվում են հեքիաթային հանդարտ պատմելառձին, որն էլ հաճախ ապահովվում է պարզ համառոտ նախադասություններով, բառերի հաջորդական հոմանշային կիրառություններով [ու հիմա պառավել, ձեռից-ոտից ընկել էր (էջ 97), օրերը գլորվում, անց են կենում, տարի են դառնում (էջ 117), գայլը խմում, ուռչում, ծանրանում է (էջ 134), թե ինչքան նրանք ուրախացան, աշխարհով մեկ եղան, էլ պատմելու չէ (էջ 244) և այլն]:

Վաղուց արդեն գաղտնիք չէ, որ հեքիաթը միջազգային ժանր է, և որ հեքիաթային սյուժեները գրեթե նույնությամբ կրկնվում են աշխարհի բոլոր ժողովուրդների բանավոր

ավանդության մեջ: Եվ ամենևին էլ զարմանալի չէ, որ պարսկական հեքիաթների ներկայացված ժողովածուն պարունակում է պատումներ, որոնք շատ հարազատ են հայ ժողովրդական հեքիաթներին: Անիմաստ է այստեղ փոխառություններ փնտրել, փորձել պարզել այս կամ այն սյուժեի նախահայրենիքը, մանավանդ որ այդպիսի չհաջողված փորձեր հեքիաթագիտության մեջ արդեն բազմիցս եղել են: Հեքիաթի ժանրային ինքնատիպությունն ու հմայքը նաև հենց այդ առեղծվածի մեջ է, որը գալիս է փաստելու, որ մարդիկ ամենուր և բոլոր ժամանակներում նույն հոգսերով ու մտահոգություններով են ապրում, որ բարու հաղթանակը համամարդկային ձգտում է, որ մարդկային վեճն արժանիքներն ազգություն չեն ճանաչում, ի վերջո, որ խելքն ու հնարամտությունն այսօր ավենահզոր կտվան են մարդու ձեռքում:

Այսքանով հանդերձ, յուրաքանչյուր ժողովրդի հեքիաթացանկ յուրօրինակ է նախ իր ազգային բներանգով, պատմաաշխարհագրական գործոնների ազդեցությամբ և նաև՝ ազգային-ավանդական խորհրդանշակագրով: Այս առումով, ինչպես իրավացիորեն նշվում է նաև գրքի առաջաբանում, հայ-իրանական մշակութային փոխառնչությունները, մշակութային միևնույն դաշտի պատկանելությունը ստեղծում են ավելի հարազատ ընդհանրություններ: Գրքում նշված այդպիսի մի շարք օրինակներին ավելացնենք մեկը. Քաչալի կերպարը, որպես «ցածր կարգի, հույսեր չներշնչող հերոս»¹, առկա է արևելյան, թուրքամոնղոլական հեքիաթներում, մինչդեռ, օրինակ, հյուսիսամերիկյան հնդկացիների և այլ ժողովուրդների մոտ այդ գործառնություն կրողներն այլ կերպարներ են: Ժողովածուում տեղ գտած մի շարք հեքիաթներում Քաչալի դերակատարումը ճշտորեն համապատասխանում է մեր հեքիաթների Քաչալին, որն առանցքայի կերպար է հայկական հրաշապատում և իրապատում հեքիաթներում: Նույն կերպ նաև Քոսայի կերպարը, որը, ի տարբերություն սրամիտ ու խորամանկ Քաչալի դրական մարմնավորման, հիմնականում նենգության ու բռնության կրողն է:

¹ Е. Мелетинский. Герой волшебной сказки, происхождение образа. М., 1958, с. 213.

Հետաքրքիր է տեսնել հատկապես հայկական և պարսկական հեքիաթների տարբերությունները, որոնք, անշուշտ, բազմաթիվ են: Ինչպես նշվում է ժողովածուի առաջաբանում, այս տարբերությունները բխում են ժողովուրդների հոգեկերտվածքի առանձնահատկություններից: Հայերն ավելի առարկայական մտածողության կրող են, «իրանցիներն օժտված են ավելի վերացական, առասպելականին հարող մտակերտվածքով» (էջ 8), այստեղից էլ որոշակի առանձնահատկություններ են առաջանում գերբնական, հեքիաթային էակների բազմազանության, չարի ու բարու մասին ըմբռնումների հարցում: Ասենք, եթե մահվան հրեշտակը հայկական հեքիաթներում հիմնականում մարդկային կերպարանք ունի, ապա պարսկական հեքիաթներում դա մի աժդահա թռչուն է, որ խլում է մարդու կյանքը՝ իր կտուցը մարդու սրտի խորքը մտցնելով («Հրեշ թռչունը», էջ 168): Ի տարբերություն պարսկականի, հայկական հեքիաթներում թռչնակերպ է ոչ թե հոգեառը, այլ հոգին: Ուշագրավ է կարմիր գլխարկով աղջկա հեքիաթի պարսկական տարբերակը, որն ավարտվում է գայլի՝ կարմիր լաչակավորին ուտելով («Գարմիր լաչակավորը», էջ 189):

Պարսկական հեքիաթների առանձնահատկություններից մեկն էլ չափածո հատվածների առատությունն է: Որոշ հեքիաթներ նույնիսկ ամբողջությամբ չափածո են հյուսված: Հաճախադեպ է նաև հեքիաթները փակող ավանդական բանաձևերի՝ խոհական չափածոյով դրսևորումը, ուր հաճախ հիշատակվում է ազոավը՝ որպես իր բույնը կորցրած, իր նպատակին չհասած չարի խորհրդանիշ:

Մեր հեքիաթը վերջացավ,
Ազոավն ընկավ փորացավ

Ու իր բույնը չհասավ (էջ 235):

Կամ՝

Մեր հեքիաթն ավարտին հասավ,

Բայց քոռ ազոավն իր բույնը չհասավ
(էջ 325):

Վերջաբանի ավանդական չափածոներից ուշագրավ է նաև շատ գեղեցիկ հանգավորմամբ թարգմանված այն հատվածը, ուր կոսմիկական մանրակերտի տարածական պատկերի՝ վերն-ներքն, լույս-մութ, հանգավոր խաղարկումով ակնարկվում է նաև հեքիաթի հակասական՝ սուտ ու ճիշտ հյուսվածքը:

Վերն գնացինք՝ լույս էր,

Ներքն իջանք՝ մութ էր,

Մեր հեքիաթը սուտ էր:

Վերն գնացինք՝ լաց էր,

Ներքն իջանք՝ վիշտ էր,

Մեր հեքիաթը ճիշտ էր:

Վերն գնացինք՝ գոռոց էր,

Ներքն իջանք՝ դմփոց էր,

Մեր հեքիաթը փչոց էր (էջ 59):

Այս և շատ այլ հանգամանքներ, իհարկե, խորհելու տեղիք են տալիս, խորհելու ոչ միայն հեքիաթի մասին, այլև շատ ավելի խորք, նրա հիմքում ընկած ազգային հոգեբանության, աշխարհայացքի, մտածելակերպի:

Ներկայացված ժողովածուն հաճելի ընթերցանության նյութ ծառայելու հետ մեկտեղ կնպաստի հեքիաթագիտական պրպտումներին՝ ևս մեկ մատչելի հնարավորություն ընձեռելով համեմատության մեջ քննելու երկու հարևան ու դարավոր մշակութային փոխառնչությունների մեջ գտնված ազգերի հեքիաթային հարուստ ավանդությունը:

Ն.ՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ